

2001 թվական

▪ **Գործունեություն բազմաբնակարան շենքերի կառավարման ոլորտին առնչվող օրենսդրության բարեփոխումների ուղղությամբ**

Ոլորտի օրենսդրության բարեփոխումների ուղղությամբ կազմակերպության առաջին գործողությունները ուղղված են եղել բազմաբնակարան շենքերի բնակիչներից շենքերի պահպանման և տեխնիկական շահագործման համար գանձվող վարձավճարները Ավելացված Արժեքի հարկից ազատված լինելու արտոնությունը վերականգնելուն: Այս հարցը խիստ կարևոր էր համատիրությունների համար, քանի որ նախկինում ունեցած այդ արտոնության կորուստը բացասական ազդեցություն էր թողել առանց այն էլ ֆինանսապես վատ վիճակում գտնվող համատիրությունների համար: Իրականացվել են.

- Հրապարակում զանգվածային լրատվամիջոցով՝ հողված «Կունայրի» թերթում. «Ետ վերցված արտոնություններ», «Կունայրի», թիվ 20(18387), մայիս 24-30 2001թ.
- Հարցի արժարժում տարբեր լսարաններում, կլոր սեղանների, հանդիպումների ընթացքում:

Բազմաբնակարան շենքի ընդհանուր բաժնային սեփականության պահպանման համար գանձվող վարձերը Ավելացված Արժեքի հարկից ազատված լինելու արտոնությունը վերականգնվեց հաջորդ տարի՝ 2002 թվականի հունիսին, ՀՀ Ազգային ժողովի որոշմամբ:

▪ **Բացատրական հանդիպումների անցկացում բնակչության շրջանում**

Կազմակերպությունը իրականացրել է բացատրական հանդիպումներ Գյումրի քաղաքի ծայրամասային (քաղաքից կտրված) թաղամասերի բազմաբնակարան շենքերի բնակչության շրջանում շենքերի կառավարման ինքնավար մարմիններ ունենալու անհրաժեշտության քարոզչությամբ:

▪ **Տեղեկատվական շտեմարանի համալրում**

Արտասահմանյան և տեղական փորձագետների (Փիթեր Թաթյան, Սթիվն Ջ. Անլյան, Բրայեն Դեզիլեց, Մայիս Վանոյան) կողմից իրականացված Հայաստանի բնակարանային ոլորտին առնչվող հետազոտությունների և վերլուծական աշխատությունների ձեռքբերում, ուսումնասիրություններ, համակարգում և շտեմարանի համալրում: